

կու ուսուցիչներից բարեկրօն քահանայ Եղիշէ
Տէր Սահակեանցից և օրիորդ Արաց իշխանութիւնի
Եկատարինէ Թարիանովից, որոնք անձնառու
եղան ձրիալէս գասահանութիւն կատարել և մեծ
աշխատութեամբ էլ շարունակեցին մինչ ցըհա-
պարակական հարցաքննութիւնն Ապա երբ ունակը ի
բարեմիտ անձնաց տեսան ինսամակալաց աշխա-
տակը, աշակերտուհեաց յառաջ ընթացութիւ-
նը և դպրոցի պայծառութիւնը, այն ժամանակը
շատերը բարերար գրուեցան և իրեանց յօժար կա-
մօք զրամատկան օգնութիւն տուին, որոնց համար
օրիորդական ուսումնարանի հոգաբարձութիւնը
պարտ կհամարէ իւր վիրայ նախ՝ յայտնել նոցա
հրապարակաւ շնորհակալութիւն և ապա համա-
ճայն նորին կանոնադրութեան կ յօդուածոյն
առաջի Հայ հասարակութեան Դօրոց ցուցանել
զհաշիւ մոփի և ծախուց միշտակեալ Մարիա-
մեան Դպրոցի հրատարակերով նաև զանուանս
բարերարաց և բարերարուհեաց նորին՝ միջոցաւ
մոփ Հայ լրազրաւ սկսալ ի կ է Հոկտեմբերի 1870
ամի ցմինն Յունվարի ներկայ 1872 ամի.

Բարեկանութ և Բարերարուհիներ.

Գորոց բնակիչ թիֆլոսեցի Գրիգոր	60
Աղամեանց	5
Խեթունեցի Գրիգի Կորեանց	20
Գորոց քաղաքացի Աղեքսանդր Գալ-	10
բարեմանց.	
,, Սովորան Վամբարեանց	5
,, Այրի Բարբարէ Պամբարեանց	5
,, Յովսէփի Պոնդարեանց	4
,, Կոնօն Բարամեանց	4
,, Գրիգոր Օքրուձեղինեանց	4
,, Այրի Ըննայ Մամինեանց	4
,, Զաբարիա բեզալեանց	4
,, Յովհաննէս Մուրալեանց	4
,, Կէէ Զազունեանց	6
,, Այրի Թամար Գուրգենեանց	10
,, Սովիայ Խուրգաղեանց	4
,, Մակրինէ Խուրգաղեանց	4
,, Սննայ Տէր Ստեփանեանց	5
,, Այրի Նատալիա Բարյանեանց	4
,, Դպիր Յովհաննէս Ասատորինեանց	8
,, Լիզա Օքրուձեղինեանց	4
,, Լալուայ Ամիրինեանց	4
,, Մարէխ Մղերեանց	4
,, Գարրիէլ Զարեանց	4
Յակովի Զազունեանց	8
Յովսէփ Գալուսինեանց	4
Թիֆլոսու բնակ Հաշինկայ Ալիսա-	
նեանց	10
Կապիտան Միքայէլ Սահակեանց	50

Գորոց քաղաքացիք Գրիգոր, Գէորգ
և Սարգիս Գաւթեանք ի միշտակ հան-
գուցեալ մօրն Քալիայի ընծայեցին : 100

Եօայի Էմիլաղեանց ի Սիշատակ հան-
գուցեալ եղբօր իւրօք նիկողայոսի 50
Յակովի Բարալեանց կտակեց 10
Սիփհական գումար հոգաբաձուաց ի
պէտու վերանորութեան ուսումնարանի
ի պահպանութիւն միոյ վերակացուհոյ
փայտի ջրի պիեսնց և այլ ուսունելի
պարագայից, որը համաձայն Դպրոցական
կանոնադրութեան արտեցաւ աշակեր-
տուհեաց յառաջնին ամի ձրիալէս 176 37

Էնդհանուր գումար բոլոր եկամունից
ապանիկերով հանդերձ (*). 589 37
Սուխ. Այս թուականներում վերցիշա-
տակեալ պարագայից համար մանր ծախ-
սերով եղած է 419 12
Ծախսը մուտքից հանելով մնում է 170 25

Իսկ եթէ այս մնացորդից ևս հանելք
ապանիկերն առ ներկայ ամի 1872 ին
մնում է պատրաստի զրամ 25

Ի վերջոց այսու ամենայնիւ Հոգաբարձութիւնը
դարձեալ պարտ կհամարէ իւր վերայ և արժան
կրգասի յիշել նաև այսուղի ի թիւս բարերա-
րաց Եղիշէ քահանայի Տէր Սահակեանցի ջանքը
ու աշխատանքը, որ ի սեր աղջի և ի լուսա-
ւորութիւն Հայ օրիորդաց համապալարացեաց իւ-
րոց ի բացմանէ Դպրոցի ցարդ ձրիալէս ուսուցա-
նում է կրօնը և Հայոց լինուն, որի աշխատանքը
և ձիգն երևում է մատաղերամ օրիորդաց վրայ,
միշտ և հանապազ գտնուում է սա ուսումնա-
րանում, զաստիաբակում է բարի վարքով և
գովանի ուսումնով, որով արախսի բարի նախան-
ձելի օրինակով և անձնանուիրութեամբ պարտա-
ւորացնում է Հոգաբարձութեանը և միանգամայն
րողը Հայ հասարակութեան Գորոց:

ՊԱՏՆԵՐ ԱԴ ՔԱՏԱՑ,

Աղքառաց նառն բարձութիւնն փօղոցներումն
երթևելերի անցքն կարգին, և իրեւ աւագակ
եթէ միոյն հանդիպին՝ անկարելի է որ առանց
քասկն պարպելու բաց թողնեն, ոչ բանութեամբ
ուժու, այլ թափանձանոք, իսկ հացին գարով
զրէթէ բանութեամբ վասն ղի փօղոցէն գնած
հացերն երբ տունն տանելու կտսին բարդից հա-
մարձակապէս աղքատներէն կյափշատակին, իսկ
զիւղերէն բեռնավ բերած հացերն մին հանդէս
կներկայացնեն տանողներին. բանզի զիս հացն

(*) Աղամակեան Դամբէանցի վերայ 100 ա. Ամիրաղեանցի
50 ա. այրի Թամար-գուրգենեանցի 10 ա. և Յովհաննէսի
վերայ 10 ա.

ձիէն չիջած բեռնատեառն կամօք յափշտակութեան առթիւ, սովալըւկներն կիութան յափշտակել և ձին իւր բեռէն ազատել. եթէ տէրն անզօր ոմն է կմաքրազարդին և օրչնաբանելով կրմենին, բայց երբ զօրաւոր ոմն է, ի մսիթարութիւն տրումութեան սրտին զոմնս ձերբակալ առնելով՝ կգանակոծէ. այլ նորա Յակոբ Մծրնայ Հայրապետին առաջին անկեալ սուտ մեռելոց դիրքը կրոնեն, և խեղճ հացատէրն իւր անձն բանտի մատնմուու երկիւղիւ սարսափած, կստիպուի ետ ինալ. Դանք այժմ աղքատաց դիշերային հանդէսն տեսնելու. ցորեկն մասնաւորապէս երկիւղ կրելով իւրեանց սրիկայ մորեկրօն եղբարդներից՝ դիշերն աւելի սրտաշարժ առնելու իւրեանց տեսարանն և խնդիրքը աւելի գժաշարժ, լազական մանկումքներ հետներն առած, ձեռքով դռներն կրաղեն, իսկ ողբակի ձայնիւ տանուտեառն գըմութեւնն և ողորմութիւնն կշարժեն:

Թէպէտ՝ ինչպէս ասացինք՝ իրօք աղքատք բազմաթիւ են քաղաքիս մէջ, բայց սուտ աղքատաց թիւն ևս զուրկ չէ նորանցից, ինչպէս որ պիտի տեսնենք. վասն զի մին աղքատ՝ որ կարող է իւր օրական պարէնն հոգալ, զիմելով առ նախարարն օտարականաց քաղաքին՝ (Նայիրլ վարային) կոկս թափանձանօք խնդրել նորա ողորմութիւնն, ինքեան ապացոյց ունելով իւր մերկութիւնն, որոյ թշուառութեանն ի գութ շարժելով նորա մարդասիրութիւնն՝ իւրեան ներկայացնել կհրամայէ, որոյ ցնցոտիքը մերկացնելով նորոգ զգեստներ կլինեցացանեն, և նորա զրգլեաներն այրել կըցանկայ իւր ներկայութեանը թերեւս փորձոյ համար մեզ անստոյդ է, այս տիսուր հրամանն կշարժէ. կիուովէ սուտ աղքատի սիրուն, քանզի իւր սէրն և սիրուն նորանումն կաշկանդած էր, ըստ աւետարանին. ուստի ընդդրկել կոկսի իւր քուրածն. թշուառի այս ընդդրկումն սպասաւորաց կարծեացն տեղի տալով՝ կիութան այրելով նորա հագուստն, չորս Ըմիրիալ կոտանեն, զորս իրեն տալով՝ վերստին կհրամայուի այրել. բայց ինչ, միթէ պիտի ընդունէր հանգերձի այրումն՝ երբ իւր բոլոր սիրուն նորա հետ պիտի այրուէր, ոչ ինաւ. վասն որոյ կրկին որոնել կհրամայուի, և նորա կատարելով անընդիշապէս՝ տասն և ութիւն պարսից Թուման ևս կգտանեն, զորս տեսաներով՝ (Նայիրլ վարային) և սաստկապէս գանակոծելով կնախատէ զայն և իւր զրդեաներն վերստին զգեցուցանել տալով նորան՝ կարձակէ.

Նոր տեսարան զուարձալի՝ վասնզի մուրացիաւնութեան հնարքների մին կերպն՝ որ Յակոբ Հայրապետէն մինչ ցարդ կորած էր, այսօր յարութիւն կառնէ՝ ըստ որում երկու անձնութ ի հեռուստ մեծ աստիճան ոմն տիկին նշմարեալ՝ նորանցից մին մեռեալ ծատելով կառակէ մին պտղավաճառի (բաղկալ) խանութիւ առջև, իսկ միւսն լալ և ողբակ կոկսի. աղնիւ տիկինն մերձենալով՝ նոցա

ողբայ պատճառն կհարցնէ, և պատասխան կընգունէ զթաշարժ բանիւր, «նեղապյն իմ կնկելով իւր կեանդն սովու սաստկութենէն՝ կրկին արտամութեան տակ ենթարկեց զիս զթշուառու՝ Տիկին, կասէ կենդանին, մի զի անիրաւ մաշն զրկեց զիս նորա յեղայրական սիրոյն և ի սիրալի խօսակցութենէ, քանզի նա էր իմ մսիթարութիւնս և նա կսփոփէր զիս սովու սաստկութենէ, երկրորդ՝ զի կարողութիւնս չի ներում ինձ նորա թաղման հանդէնն և պատանի պիտոյքն, հոգարյ, այս զըթաշարժ և աղէկէզ խօսքերէն, ողորմութեան և ունդուն սէրն կարմենանայ աղնուու հույսումն, կհրամայէ պտղավաճառին որ նորա զիտութեամբ կատարուի նորա թաղման հանդէնն և պատանի պիտոյքքն, որոյ ծախնքն վճարել կիսուտանայր. բայց մերժողական պատասխան կընդունի աղնուաղամ տիկինն, քանզի պտղավաճառն նոցա խորաման կութեանցն ականատես և յառաջագյն տեղեակ իսկ էր. նորա հրաժարման պատճառն կհարցնուի, և նա բանիւր չկարողանալով նորա պատճառն յայտնել՝ կիութայ զործով ցցց տալ, վասն որոյ մին խման առնելով կոկսի խմել սուտ մեռելով կողն. որոյ սաստկութեանն՝ իւր տկարութիւնն անանցօր լինելով կոստու և ի փախուստ կաձապարէ, Եւ պտղավաճառն խնդամտաբար կոկսի պատասխանել տիկինովն, « և ես ըստ ամենայնի պատրաստ եմ, ձեր հրամանն կատարելոց տիկին. բայց ահա այս էր իմ ձեր աղնուութեան առջև պատուիրանաղանց գտնուելու պատճառն, և այսպէս խնդրութեամբ կմենին տիկինը վերջ տալով տերանին:

Դանք այժմ միւս աղքատաց դասին ուշադրութիւն գարձնենք. վասն զի քանի անձնութ օրական պարենին կարօտ լինելով՝ և աւազակութեան ու գողութեան պաշտօնն կատարելուց տկար՝ մեռելոց ստորերկիրեայ զերեզմաններն, կայցելն, և նոցա պատանեներն կիուզուպտեն, զօր մեռելատեարը տեսանելով՝ Ատենին կմատնեն զնոսա, ուր արդար զատաստանն նոցա աջ ականցներն հատմանելով՝ թող կտայ, որ փողցներումն շըցին ի զգուշութիւն ամենայն մարդկան:

Աղքատաց պատկերիս մէջ է պարունակվում նա և այն զօրութիւնն, որով մաշու երկիւղն կթագաւորէ ջրաղացպանների սրտումն, վասն զի սովալը անձնութ յամենայն կողմանէ յուսահատեալ լինելով՝ զըրաղացպաններն կիսեղբնն նոցա ալիւրն և ցորէնն յափշտակելով.

Ի Դա-Շէ՛

ՄԵԼԱՑԵԱԼ ՄՈՒԺՈՒՄԲԱՐՑԻՔ

Գրութիւնիցս քանի օր յառաջ Մուժումբարցի Հայ երիտասարդի մին Տիկիսիսէն վերադարձեալ երասխն անցանելով և իւր երիտասարդա-

կան արիւնիցն գատապարտուելով՝ արքունական պողոսայն կը մողնէ, և կակի լեռանց ստորոտով ձանապարհորդել միջոցի համառօտութեան համար, այլ աւաղ, զի ձանապարհ համառօտութեանն փոխանակ՝ իւր կեանքըն կը համառօտէ թշուան, վասն զի մին ձինարից խորափափ մէջ ընկղմելով կը մուտքաւ իւր կեանքըն իւր ձիովն հանգիր, և այնպէս ձիոյ վերս սառած կմնայ իրբեք քարեայ արձան:

Դիւ այդ ցաւալի յօդուածն չմիրջացրած ուշադրութիւնդ գարձո՛ Յարդոյ ընթերց' լ նոյն զեղջ բնակիչ մի անձի ցաւալի տեսարանին, վասն զի Նարատաղիցըն իւր Հայրինիքն վերագարձի ժամանակն (Խլարի) ասացուած զեղջ մերձակայ իւրին վերայ՝ որ եօմն վերսա հետի էր իւրեանց զիւղէն՝ ձիւնահասոն բքի դիպելով և անկարող լինելով նորա զիմարդութեանն իւր տառատոկովն ծածկուելով՝ կը հուրի նոյն բքին, իւր հետն ևս և իւր երիվարն տովալուկ զաղանացն, իսկ բրնձի և այլ պղնձեղնաց բռնն և մի հարիւր վաթուուն և եօմն մանեթն օդն իւազաղելէն ետքը՝ ձանապարհորդաց կիմակին իւր զին միայն իւր ողորմելի ընտանեաց թողով ի մսիթարութիւն. բայց Ասուուած արդարութիւնն շարժելով նորա որբոց վերայ՝ բրնձի միջնորդութեամբն իրեղելուն կատնուին, վասն զի թափեալ բրնձի հետքը զիւտաքրիբներն կառաջնորդէ մինչև (Խլարի) զեղջ զերեզմանացն, որոյ ապացուցութեամբ խստելով զզիւղացին և ատենի մատնութեան երկիւղիւ սարսափեցուցանելով զնոսա՝ իրեղինաց կէսն վերսացան, որ անշուշտ պիտի հարկազրէ զմնացորդն ևս վճարել:

‘Եազար’ ‘Եազար’ իւնանան:

Է Դ Ա Ր Ե Ւ Տ :

ՀԱՄԱԲՈՅ ՏԵՍՈՒԹԻՒՆ ԽՐԱՄՈՒ ԵԿ ՊԵՍԱՐԱՐՊՊՈՅ ՔԱՆԴ ՄԻ ՀԱԴԵԽՈՐ ԾԽՎԱԿԱՆ ԴՊՐՈՏԱՑ ՆԵՐԿԱՅ ԴՐՈՒԹԻՒՆԸ.

Արարատ պատուական ամամթերթի էջերուն մէջ ուրախազգաց սրտիւ կարդալով նորանոր Դպրոցաց բացման աւետաւոր լուրը, անոնց անխոտոր կառավարութեան համար յօրինուած կա, նոները, տարեկան հարցաքնուութեան ժամանակ տեսնուած յառաջարկութիւնը, բնականապէս ամենայն ուսումնասէր հայր նոր եռանդ մի կզբայ ի սրտիւ իւր քաղաքի Դպրոցին վերայ աչք դարձնել և քննողական անաշառ տեսութեամբ հաւասարելով իւր Դպրոցին գրութիւնը ուրիշ ազգային նոյնապիսի Դպրոցաց հետ՝ ջանալ փոյթեանդն ուրով նոր ի նորոյ բարեկարգելու զայն

և գովելի նախանձաւորութեամբ ըստ չափու նիւթական կարեաց Դպրոցին՝ պէտք եղած ուսումնական ու տնտեսական փոփոխութիւնները ընելու, վասն զի ո՛ր և իցէ ազգային կամ օտարազգի Դպրոցներ միշտ նոյն գրութեան ու կառավարութեան կերպը յամառաբար պահպանելով չէ՛ որ յառաջադէմ զարգանալու միջոց ունեցած են, հապա հիսո զիստէ նորանոր բարեկարգ փոփոխութեանց ենթարկուելով կարողացած են իւրեանց իրական նշանակութիւնն լաւ հասկանալ ու կառարել:

Ինչպէս որ զասատուութեան կերպը զզալի կերպով կղիւրանայ նոր եղանակաւ յօրինուած զասաւրոց ի լոյս եղնելովը և իմաստուն գործադրութեամբը, նոյնպէս նա և Դպրոցաց նիւթական ու բարոյական կառավարութեան եղանակը ի լաւ անդր կիսամուի հոգարարձուաց հմուտ գործառնաւթեամբն, ու զլխաւորապէս անշահասէր գործունէութեամիլը: Ասկից ալ հիստեհ որ ազգային Դպրոց մի այն ժամանակ միայն կարող է ազատուել իւր հինաւուրց կապանքներէն ու սեմենեթեալ՝ գրութեանէն երթ գրոցի մը անսայթաք կառավարութեան զլխաւոր շարժառիթը, որ է գրամազլուխը ի լոյս կենէ և քաղաքի մը հասարակութեան ընդհանուրին առջև կպարզուին Դըրոցի կառավարութեան համար նշանակուած զըրամական աղբեւրները մանրամասն հաշուատեսութեամբ:

Դիտելու արժանի բան է որ մեր ազգին ամենայն հայաբնակ քաղաքաց Դպրոցներուն ինչպէս որ հաստատութեանը սկզբնապատճառ կլինին գիւղի մը կամ քաղաքի մը մէջ քանի մի խօսքի տէր իշխաններ, նոյնպէս և անոնց շուտով փակուելուն նոյն անձնելով կարճ միջոցի մէջ պատճառ կուտան իրենց անհետատես ու շահախնդիր կառավարութեան շնորհիւը. վասն զի նորահաստատ Դպրոցին վերայ ի բացման նոյն անձնելով հոգարարձու նշանակուելով՝ ի հարկէ ի շնորհուելու հարստութեան՝ այնպիսի անթափանցելի վարագուրով կը ջապատճեն նորա տնտեսական կառավարութիւնը հասարակութեան առջև, և այնպէս անմատչելի կը նեն Դպրոցին գոները միջակ կարգի ու աղքատ մարդկանց համար, որ շուտով